ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՐ

ՕՐԱԳԻՐ ՏԱՍՆՕՐԵԱՅ

Ա. ՏԱՐԻ 1861

Դը հրատարակուի Ամսոյն 10ին 20ին եւ վերջին:
Վեցամսեայ գինն է 60 դահեկան ԿԱՆԽԻԿ:
Ուզողը կրնայ ստորագրուիլ, Պոլիս Զեննիբլի խանը վերի յարկը Թ. 1—3 Խրլաբրի սենեակը. եւ Մերնանը Մարգարեան Արգոյ Յարութիւն աղայի գրատունը:
Ստորագրութիւնը 1861 Յունուար 10ին կսկըսի:

Առձի ղրկանին ամբողջ 12 թիւը ուզողը 30 դահեկան պիտի վճարէ:
Անձնական ղանու մը համար ելլալու ծանուցմանց համեմատաբար սակարկութիւն կըլլայ:
Ո եւ իցէ նամակ եւ գրութիւնք Խմբագրին պիտի ուղղուի:

10 ԱՊՐԻԼ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՆ ԹԻՒ 22

ԱՌԳԱՅԻՆ

ՄԵՂՈՒ

ԿԱՄ

«Ամսոյս 17ին Ընդհանուր Ժողովին նկարագրութիւնը»:

(Տես Արարատեան Դար Թիւ 19—20)

ԵՒ ՎԵՐՋ

Ժ.

Մեր նախընթաց 19 և 20 թիւերով կարծեմք ըստ բաւականի խօսեցանք վերոյիշուած Մեղուի ցաւալի «նկարագրութեանը» վրայ։

Իսկ այժմ կը մնայ սոյն «նկարագրութեան» մէկ երկու կէտերուն վրայ ևս դիտողութիւններ ընել, որոնք իրաւունքնէ ճշմարտապէս Կրօնասէր և Ազգասէր պտերու ամենամեծ վնասու կսկիծ մը պատճառած է։ Ուստի ըստ անհրաժարելի պարտաւորութեան մերոյ, և ըստ արժանաւոյն անոնց համար ալ հարկ եղածին չափ քանի մը խօսք ընելով ալ վերջացնեմք այս աղետալի և գայթակղեցուցիչ նկարագրութեան վրայ ըրած քննադատութիւններս։

Արդ մեր Կրօնասէր Մեղուն ջերմեռանդ ոգւով մը կ'ըսէ (նոյն նկարագրութեան մէջ, Մեղու Թիւ 125 երես 44) թէ՝ «Մենք ալ կղեռնք հոգեւոր դարձեալ և Ազգասէր Եպիսկոպոսի մը Երուսաղէմ երթալու և գոյժամանակեայ վերջով հոն նստելու կարիքունենք»։

Մե՞նք, Մեղո՞ւն, զգա՞լ... պատուաւոր և Ազգասէր Եպիսկոպո՞ս... (Զարմա՞նք)։

Ով են այս դնելը, և կամ որոնք են այս խօսքերը արտասանողը։ Ըսենք թէ մէկը Մեղուն, մէկալն ալ իւր հաւատարիմ ընկերը Մեղուխեչա՞ն է որդեօք... (անշուշտ ան) պիտի ըլլայ, զի ամեն տեղ և ամեն պարագայի մէջ իր հետ ըլլալը կը լսեմք...

Ինչ և իցէ ադ Մեղուխեչանեղովից արմատը այժմ մէկդի ձգելով, սա հասկընենք թէ արդեօք այս այն Մեղո՞ւն է որ կրօնքը սահմանադրական է ըսող և քարոզողներու հետ համակամ եղած՝ մինչև ցարդ իրեն համար Վանք, Աթոռ, Միաբանութիւն ոչինչ և անօգուտ բաներ էին։ Այս այն Մեղո՞ւն է որ այսօր «պատուաւոր և Ազգասէր Եպիսկոպոս» բառերը բերանն առած՝ դեռ երեկ չէ մէկալն օր հրապարակաւ գրեթէ համայն—Հայ Եկեղեցական դասը տգէտ և ժողովուրդը բռնաբարող, վայրենի ազատութիւն մը ստացող, անգութ և բարբարոս, անհոգ և անօրէն — կը բարբանջէր։ Վերջապէս այս այն Մեղո՞ւն է որ դեռ ամիս մը առաջ Հայ կղերը իբրև գործիք անօրէնութեանց՝ դանոնք սասիկ պատժոց ենթակայ կը համարէր, իսկ հիմայ չամրշնալով (ըսեմք) Ս. Երուսաղէմ դարձեալ և «Ազգասէր Եպիսկոպոս» երթալու կարիքութիւն մը կ'զգայ։

Ամենազարմանալի՛ հակասութիւն։

Գո՛ ըսենք թէ իրաւունքնէ այս — կարիքութիւնը — զգացած ըլլայ (նպատակաւ մը), բայց ի՞նչպէս կ'ըլլայ որ «անօրէնութեանց գործիք եղող» Հայ կղերին մէջէն այն իր վնասուած «պատուաւոր և Ազգասէր Եպիսկոպոս» գտնէ... Մենք շատ կաղաչենք իրեն (Մեղուին) որ անյապաղ մեզի այն անօրէն կղերականաց մէջէն

քանի մը « պատուաւոր և Ազգասէր Եպիսկոպոսի անուններ յայտնէ · որպէս զի , որքան որ այսօր այս պաշտօնին հարկ չեղաւ նէ ալ , կըրնայ ըլլալ որ վաղը կամ միւս օր ուրիշ պաշտօններու համար կը հարկաւորի · ·) · Ափսո՛ս , ափսո՛ս , ի՞նչ անիմանալի ընթացք մըն է Մեղրի ընթացքը , որ Յունուարի մէջ խօսաՀին , հակառակը կը խօսի Փետրուարին մէջ · Եւ ի՞նչպիսի բերան է այն որ եռեսուն օրուան միջոցին երկու կերպ հով կը փչէ՝ մէյմը պաղուկ մէյմը տաքուկ · · · ·

Բայց չէ՞ Մեղրի այս կէտիս մէջ բերանը փոխած է , այսինքն ոչ տաք և ոչ պաղ հով կը փչէ , այլ այժմ առաւել բոցակիզեալ կայծեր կը ժայթքէ բերնէն Ս · Երուսաղէմի բազմահամբաւ և անմեղ Միաբանութեան վրայ , սա կերպ շաղփաղփունքներով , այսինքն (հոս մէջ էջեղծանէ եղած) « Ազգը ակէ 38 — 40 տարի առաջ (կըսէ) նոյն (Երուսաղէմայ) Վանքը ուրիշ Եպիսկոպոս մ՚ալ ղրկելու որոշում մը ընելով , վերջապէս միաբաններուն խօսքին ականջը կախեց ու ղրկեց , սակայն քիչ ատենէն Միաբաններուն ձեռքով Վանքին մէջ այն անձին թունաւորված ըլլալը լսելու ցաւն ունեցաւ , այնպիսի Եպիսկոպոս մը թունաւորեց և կենդանուոյն դերեզման իջեցուց այն ատենի Երուսաղէմի Միաբանութիւնը , որ թէ իր ժամանակին և թէ արդի Եպիսկոպոսներուն մէջ հաղուագիւտ է · · · » և մենք ալ հոս Մեղրի քիչ մը զեվլեկ է և սահմանին ու գրաբանին էն մեծն է ըսենք նէ տեղն է , ալ հարկ եղածը ուրիշները ըսեն · Արդ այս սոսկալի եղեռնագործութիւնը իրապէս ո՞ւր , ե՞րբ , ո՞ր ժամանակ , ո՞ր ատեն , ո՞ր պարագայի մէջ կատարուեր է · և կամ ո՞վ է , ո՞ւրկից է այս « հաղուագիւտ » Եպիսկոպոսը , և ի՞նչ է անունը , մականունը , այս դժբաղդ Եպիսկոպոսին , լաւ ևս է ըսել նահատակին , Մեղրն ասոնց ամենքն ալ գաղտագողական կերպիւ կը կլլէ , միայն 38 — 40 տարի առաջ ըսելով և ժամանակագրական թուականը անգամ շփոթութեան մէջ ձգելով · Վանդլ Յայտնի է թէ այսպիսի կարգէ դուրս կատարուած սարսափելի դէպք մը յառաջ բերուած ժամանակ , (բայց ի՛ վերոյիշեալ ըսածներնուս իրողութիւնները յայտնելէ) չէ թէ անոր ժամանակագրութեան ճիշդ թուականը տարիով կամ ամիսովը , այլ օրովն անգամ կը յիշատակուի · · · · Մենք այս բանը Մեղրի ներկայ նը կարագրութեանը մէջ տեսած օրերնէս ի՛ վեր , Ազգին մէջ քահանայ և աշխարհական , 40 տարեկանէն մինչև 80 տարեկան բարձր և ստորին աստիճան մարդոց հարցուցինք , անոնցմէ փընտրեցինք , ըսածնին հետազօտեցինք , և այլ բազում լսածներնիս կշռեցինք , շոշափեցինք , բայց յիշեալ տարիներու մէջ , ոչ առաջ և ոչ ետքը՝ այս կերպ բան մը ըլլալը չի գտանք , և անոր շուքն անգամ չի տեսանք · բաց ի Աւետիք անունով Եպիսկոպոսի մը այն (Մեղրի թուականի) տարիները իբրև ուխտաւոր Երուսաղէմ երթալէն , որ ինչպէս ան ալ քիչ ժամանակ հոն կենալէն , և իւր ուխտերը կատարելէ յետոյ ողջ առողջ ետ դարձած , Երուսաղէմէ 15—20 օրուան ճամբայ հեռու տեղ մը՝ դեռ քանի մը տարի ապրելէ ետքը , նոյն տեղ վախճաներ և հոն թաղուեր է , որ և կարելի է մինչև այս օրս գերեզմանն ալ տեսնուի* ·

Ա՞յս է արդեօք կարկափան Մեղրի ցրցուցած Եպիսկոպոսը , որ իւր այս արշիամենասոսկալի , և արշիամենահռելի ստութեանը ծածկոց մը ըլլալու համար անունը չի տար , եթէ որ այս է , (և իրօք ալ այս պիտի ըլլայ , զի ինչպէս ըսինք այն ժամանակները հոն ուրիշ չէ՛ Եպիսկոպոս , այլ Վարդապետ մը գացած ըլլալուն Պօլսոյ արձանագրութեանց մէջ յիշատակութիւն մը չըլլալէն ի զատ , Ս · Երուսաղէմ Կայսերական Պալատը՝ որ Հոգւոյն Սրբոյ Պալատեանը նուիրեալ Եկեղեցի է այժմ , որ և այս Եկեղեցւոյ բակը կը թաղուին Ս · Յակոբայ Վանից Միաբանութեան մեռնող Պատրիարքներն և Եպիսկոպոսները · նաև կը թաղուին դիպուածով Վանքը իբրև հիւր գնալող , և դժբաղդաբար վախճանող Եպիսկոպոսի մը մարմինը · այս գերեզմանատան մէջ գտնուած քարերուն վրայ չեն տեսնուիր ոչ այս կերպ անուն մը , ոչ այն թուականներով և ոչ մէկ ատեն մը հոն իբրև « տեղապահ » գացած , ուրանկարծական մահուամբ մեռած , և « ենդոնոյ գերեզման էջեղ եպիսկոպոսի մը նշանները) · ուրեմն տհա թող ըսէ Մեղրն եղելութիւնը , և անանկ (կարելի է) օդէն , հովէն , ջուրէն , հողէն առած , նա մանաւանդ այն խառնակիչ Մեղրիներէ լսածներու տեղեկացած լուրերուն կու-

* Առած տեղեկութիւններնուս մէջ ամէն ուրիշ Մեսրոպ Եպիսկոպոսի մը անուն կայ նէ ալ , ոչ այս թուականին եւ ոչ ալ այս դէպքին հետ յարաբերութիւն մը ունենալուն պատմութիւնը զանց ընենք ·

բորդական պատճառներու բացատրութիւնները մասնաւոր ատենի մը թողլով, այժմիկ սոսոր վերջնական պատճառը ցը ցուներ ուզելով ըսենք թէ՝ կարելի է լուսահոգի — Յովհաննէս Պատրիարքին օրովը Պոլիս եկած (մէջը ինչ ըլլալը անյայտ) անդ-իներ-ան մէջէն եղածներէն Մեղ-ին բաժին մը չի տրուիլ, և կամ սա գանձերէ պարպուած ու կողոպտուած ստակներէն մէկ մեծ դումարը Մեղ-ին Մեղուանոցը չի խրկուիլն, և կամ թէ վանքին Միաբանութեան մէջ տեղ եղած գողդնիները իրապէս Մեղ-ին չի յայտնուիլն է . . . Ասիկայ կարելիապէս կարծիք մըն է, և կրնայ ընդունելի կարծիք մը համարուիլ, որովհետև երևցածին Մեղ-ին թշնամութիւնը առ հասարակ վանօրէից՝ մի այն անոնց սեպհական ընչիցը և հարստութեանցը (եթէ ունին) համար է. և կարծես թէ միակերպ նոցունցնիւթական, այսինքն ուտելիքի, ըմպելիքի և հագնելիքի մասերուն, և անոնց ստակին վրայ կը խօսի, և ոչ այլ ուրիշ բարոյական մասերուն. միշտ մարմնաւորը կը խորհի, և ոչ հեգևորը . . . Այս ըսածնիս յայտնի կ'ապացուցանեն այն իրողութիւնները, որ շատ անգամ Մեղ-ն Վանքերու և Եկեղեցիներու նկատմամբ ձեռք առած՝ սկիզբէն մինչև վերջը ըրած հետապօտութիւնները ոտակի, դարձեալ ստակի վրայ գոյացած է և ոչ այլ ինչ։ Ինչպէս ատեն մը ելեր ու ըսեր էր թէ՝ այս ինչ Անապատի վանքը չորս միլիոն և երկու հարիւր յիսուն հազար դահեկանի ըստակ կար ի՞նչ եղաւ. ուրիշ ատեն մը՝ այն ինչ Քաղաքի Եկեղեցին անհամար հարստութիւններ դիզուած էր ո՞վ կերաւ պօռացեր էր։ Երբեմն ալ Աղգին հարստութիւնը այս ինչ անուն հարուստները յափշտակեցին, Իւանդանոցի ստակները սապէս մարդիկը, աղքատանոցի նապէս մարդիկը կերան ու կլեցին ըսեր էր, և վերջապէս մօտերս ալ ելեր կերպիւ մը «Այերուն հարստութիւնը դողութեամբ է» քարոզեր էր . . . :

Այս բաները ո՞վ լուր տուեր էր իրեն (Մեղ-ին), Աղգը, ոչ երբէք. ընդհանուր ժողովո՞ւրդը գանգատեր էին, ամենևին. արդեօ՞ այս ինչ այն ինչ անձերուն դեմ դեսուն նամանդ՞ ըսեր էր, քաւ լեցի, հապա . . . հապա, հապա. տակը բան կայ. անոնք բացայայտելու դեռ ժամանակ կայ, և առ այժմ թող մնայ . . . : Բայց ուրիշ կողմանէ չափազանց կը զարմանամք Մեղ-ի այս ստակի մասին վրայօք ըրած տատամսութեանցը վրայ, որ կը կարծէ թէ աշխարհի բոլոր ոսկիները, արծաթները Հայոց վանքերուն գանձերը լեցուած, և կամ չափազանց չըսելու համար՝ չորս միլիոն Հայոց հարստութիւնները միշտ վանքերը դիզուած են, որ այնքան ասդիս անդին, անտուկ անտուկ բաժնուելէն ետքը դեռ չի հատնիր։ Պատրիարքները կ'ուտեն, Լուսարարապետները կը կողոպտեն, Առաջնորդները կը յափշտակեն, Սահակները կը մրսլսեն, մանանիներ կը փսխեն, շատ մը սուր անուր սընտուկները կը լեցուին, Հայլն, Հայլն, Հայլն. և դեռ բազում հարստութիւն . . . :

Եւ դարձեալ թէ՝ ամեն վանք, նա մանաւանդ Երուսաղէմի վանքը՝ գտնուած տեղւոյն հարկապահանջմանե ստիպեալ, և ըստ իւր ունեցած վիճակին հարկաւորութենէ պարտաւորեալ՝ տարին (ըստ բաւականի) մեծագումար ծախքի մը ենթակայ եղած ըլլալով, հարիւրաւոր տարիներէ հետէ այս ծախքն ալ ընելէ յետոյ՝ տակաւին դեռևս հարստութիւն . . . Է՛հ մարդս ո՞ւրքան անխելք և անմիտ ըլլալու է որ այս բաներուն հաւատայ, որոնք Մեղ-ին քարոզածներուն հետևանքն է։

Սակայն մենք անաչառապէս ասոնց ընդհակառակը քարոզելով կըսենք թէ՝ մեր բուն Հայոց Վանքերը աղքատ են, և կան որ՞ն նաև սնանկ աղքատ։ Եթէ մէջերնէն ոմանք հարուստ կ'երևին, ըստ մեզ երևցածը չափազանց է, ինչպէս գլխաւորաբար Երուսաղէմի վանքը, որ այս օրուան օրս եթէ Մեղ-ի հարցունելու ըլլամք յիշեալ Վանքին մէջ Զինուսաչինի Կայսերապատի հարստութիւններէ աւելի հարստութիւն կը ցըցունէ, բայց խօսքով։ Յիրաւի հարուստ է Վանքը (ինչպէս որ տեսանք) բայց ոչ երբէք ստակով, այլ անգիւտ հնութիւններով. հարո՛ւստ, բայց ոչ ոսկի և արծաթէ պատրաստ դրամով, այլ բազում նուիրեալ գոհարաբարդ խաչերով, գաւազաններով, մասունքներով, մարգարտաբարդ թագերով, շուրջառներով, ոսկի և արծաթ կանթեղներով և այլ անհամար թանկագին զարդերով։ Այո՛ չափազանց հարուստ, բայց չէ աւելի նիւթապէս ողքան որ բարոյապէս։ Վերջապէս կրնամք ըսել թէ (անկեղծ խօսելով) օտար Աղգաց վանքերու համեմատաբար, թէ Երուսաղէմի վանքը և թէ ուրիշ Հայոց երեւելի վանքերը առաւել հոգևորապէս ճոխացեալ են, քան մարմնաւորապէս։

Եթէ որ կայ գլխաւոր պակասութիւն մի՝ի

Կարծեմ այս կերպով տարուան մը մէջ ամէն բանի ճշդապէս տեղեակ կ'ըլլայ, այսինքն հաւուստ վանքն ու աղքատ վանքը կրնայ պարզապէս որոշել. բայց սա ալ չի մոռնայ դիտելու թէ, մէկէն ինչքան դուրս բան կելլէ, և մէկալէն որքան, քանզի համեմատաբար յայտնի պիտի տեսնէ որ իրենին ելքը շատ մուսքը քիչ, և կամ բերան բերնի, և կամ թէ սակաւիկ մէն ալ եւելցած, նոյնպէս մերինին ելքը քիչ, իսկ մուտքը . . . .

Աղէ՛ ըսէք ըսէք Աեղուին շուտ դառնայ, և շատ չի տնտնայ հոն տեղը, զի կարելի է մէկ կողմէն ամչնալէն, միւս կողմէն զարմանքէն սաստիկ մոատանջութեան մը մէջ իյնալով յանկարծական ցաւերու կը հանդիպի . . . .

Աւսո՜ս, ափսոս, հաղար ափսոս. Այս մասին Աեղուին շատ և շատ ըսելիքներ ունէինք ալ նէ, յօդուածնիս խիստ չերկարելու համար այժմիկ այսքանը բաւ կը համարիմք.

Քանի որ վերջացնեմք կ'ըսենք սա ողբալի նկարագրութիւնը, անոր վրայօք զգացած սրբտերնուս սատիկ ցաւը չի թողուր. Ահա նոր բանոր կ'ստիպէ մեր խիղճը որ վայրիկ մի ևս չի թողումք Աեղուին օձիքը.

Արդ նայեցէք սա գիներմոլ Աեղուին հոս ինչ կը խեղկատակաբանէ, «բայց Ա՝արդապետներ, մի՛ այդչափ անձնանուէր ըլլաք, մեղք էք, դուք Աղգին պէտք էք �՝ ՀԷ*, Աղգը ձեր գլուխը կտրելով, ձեր արիւնը մանելու կամք չունի, և ձեր արիւնին կարօտութիւն չունի. ձեր արիւնը ձեր գլուխը . . . . »։ Ո՞ր վարդապետներու համար է այս խնամաբար ըսածները. — Երուսաղէմայ Մխիթարեան Արժանայարգ Սահակ և Յակոբ վարդապետներու համար —։ Ը՛հ, իրաւ եթէ խաւարի մէջ շրջեալ մարդիկ կոյր զկուրայն և աղջամղջաբար կը խօսի, բայց առա՛ղ սպերախտութեանս, այսքանն ալ կըլլայ եղեր. Ա՞յնքան կուրութիւն, այնքան ապերախտութիւն, որ Աղգին մեծարանաց և գովեստից արժանի անհատները հրապարակաւ և Աեղուի պէս անզգամ գրիչներու տակ ծաղու արժանի ըլլան.

Քաջածանօթ է արդեօք սա անզգայ Աեղուն յիշեալ Ա՝արդապետներուն վարքին, բարքին, վարմունքին, և անոնց դէպ 'ի Ա՝գահրութեան ունեցած եռանդոյն. գիտէ՞, կը ճանչնայ, այս անպատկառաբար ծաղը ըրած մարդիկը, և անոնց երախտագիտութեան արժանի գործերը երախտակրօրէն Աեղուն. Ըսենք թէ Սահակ վարդապետը հինգ վեց տարիէ 'ի վեր հոս տեսեր, և 'ի հեռուստ ճանչցեր է զինքը առանց անոր ինչպիսի անձ մը ըլլալը ստոյգ աղբիւրներէ տեղեկանալու. իսկ Յակոբ վարդապետը տեսե՞ր էր, անունը անգամ լսե՞ր էր, կամ թէ որ այժմ հեռուանց դռան մը պատառուածէն տեսեր է նէ, գոնէ մէկի մը հարցուցե՞ր է թէ այն դանդամ, և անգամ մը՝ն ալ ոտ եկող մարդը ի՞նչ մարդ է.

Յիրաւի մենք ալ անունը լսելով մօտերս ճանչցանք Սահակ վարդապետը, և մէկ քանի անգամ իրեն հետ տեսութիւն ընելու բարեբաղդութիւնը ունեցանք, և իւր մարդասէր և հեզաբարոյ բնաւորութենէ, խոնարհական և ազնիւ խօսքերէ իսկ և իսկ իմացանք ինչ Աստուածավախ, Աղգասէր, և ազնիւ վարդապետ մը ըլլալը, և այս մեր իմացումը (բաց 'ի Աեղուէն) համայն բարեսէր Աղգայնոց բարձրաբարբառ գովութիւններովը սրտերնուս վրայ տպաւորուեցաւ. Աւսոս որ, քանի մը տարի առաջ Ս. Երուսաղէմ ուխտագնացութեան ատեններս զինք հոն չի գտնելով՝ չի կրցանք լսածնուս համեմատ ըստ բաւականի անոր Ա՝անքին մէջ գործած անխոնջ Հոգևոր աշխատութիւններուն ականատես ըլլալ. սակայն տեսանք հոն աչօք Աեղուն խեղճանալով պարսաւած այս առաջին թարգման անուանեալ պատուարժան Յակոբ վարդապետը, տեսանք զինքը կարի յոյժ գործունեայ անձ մը 'ի մէջ Մխիթարեան, տեսանք իրեն տաժանելի աշխատութիւնները 'ի պատիւ Ս. Աթոռոյն և 'ի պարծանս Աղգին, տեսանք երբեմն 'ի պաշտպանութիւն վասն իրաւանց Աթոռոյն, որ ըսել է Աղգին, ինքզինք քաջաբար նետելը վանքին թշնամիներուն պատրաստած երկիւղալից դարաններուն մէջ տեղը. Ա՝երջապէս տեսանք զինքը հոն բոլոր Քրիստոնեայ, Մահմետական և Հրէայ ազգաց կողմէն բաւական յարգ և համբաւ ստացած մէկ մը, և այլն, և այլն, և այլն.

Սակայն մոքերնուս մէջ աղէկ տպաւորուած է այն տարուան Տեառն մերոյ Համբարձման նախատօնակի երեկոյին ձիթենեաց լեռան գա-

* Այս երկու երեք բառը նօտր գրերով ընելուն միտքը ինչ էր նէ թող Աեղուն ինքնիրեն կապիկի նման ուրախանայ, ցատկէ ու ցատկռտէ, զի մենք բան մը չի հասկցանք, եւ հասկնալն ալ չենք փափաքիր.

գամբը, (ուր տեղէն Փրկիչն մեր Համբարձաւ) Երիսաղեմէն մէջ ինչն բանի մը համար ծագած կռիւը, որ Վանքին մէջ այս լուրը առաջին պէս Յակոբ վարդապետը, թռչնոյ նման հասաւ կռուոյն տեղը, և սաստկապէս պաշտպանեց Հայոց իրաւունքը, ու կռիւը դադրեցուց, որ եթէ վայրկեան մը անտնար կարելի է կռիւը գէշ հետևանաց կերպարանք մը կ'ստանար։ Ըսածներնիս թող ամիսներով ու տարիներով Երուսաղէմ կեցող Մահտեսի Եղբայրներնիս վկայեն, վասն զի Մեղ չի գիտեր այս բանը, զի չի տեսներ այլ միայն կը լսէ, և կարելի է չի հաւատար։

Այո՛ չի հաւատար՝ քանզի ճշմարիտ է։ Մեզուն կը հաւատայ չէ մանաւորապէս սուտերուն, այլ խոշո՛ր խոշո՛ր....

Ի վախճանի սա մէկ քանի խօսքն ալ ընենք, ու անով վերջ տանք խօսքերնուս։

Մեզ՝ մինչդեռ տգիտաբար կը ծաղրէ վարդապետներուն՝ «թէ որ պակուութիւն մը ըլլայ գլուխնիս կտրեցէք» ի խօսքը, (իրաւ ըսած են մի, չեն մի ան չիյտեմք ա) և այս խօսքը յանիրաւի մէկ դին մէկալ դին քաշկռտած ատեն, անդիէն Երուսաղէմայ Միաբանից մէջէն ոմանք, 'ի պատիւ և 'ի պաշտպանութիւն Աթոռոյ արդեօք քանի՞ քանի անգամ մահուան վտանգի մէջ դրեր են ինքզինքնին այն աւազակ և արիւնռուշտ Արաբներու դէմ ելլելով, ոբոնք կուզեն եղեր Հայոց Վանքերը թալանելու, և ուխտաւոր ճամբորդները հանուելնելու, և զանոնք ատեն ատեն նեղելու....

Ահա Մեզ՝ թող աս ալ լսէ, և այն վարդապետներուն ըսածը բաղդատէ, ու այնպէս ըրած Արշիամենախեզկատակաբանութեանը վրայ ուշամտութեամբ մը խորհելով կ'ուզէ նէ պատկառի կուզէ նէ չը պատկառի, ան իր գիտնալու բանն է։ Դարձեալ իւր այս աննման նը-կարագրութեանը վայ մեր երեք կամ չորս թուով ըրած քննադատութիւններնուս մէջ հարկ եղած կէտերուն կուզէ նէ պատասխանէ, կուզէ նէ չի պատասխանէ, ան ալ իր կամքն է։

Բայց Յեսոյ մենք ըսելիք կունենանք եղեր, ան ալ մեր գիտնալիք բանն է։ Ուրեմն այժմիկ ալ բաւական է ընենք ու կնքենք բերանիս*։

*Ղարապաղցի Պ. Շիսեանցին համար գրածն ալ թող Ռուսաստանցի հայերը կարդան, եւ անոր վրայ խորհին՝ խորհրդածեն եթէ որ կուզեն։

ԿՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

Ինչպէս յայտնի է Հասարակութեան որ, տարի է մը 'ի վեր վերոգրեալ անուամբ Ամսագիր մը կը հրատարակուի Ռուսաստանի մէջ, Տիւխսի Հայոց կողմէն Մեծարգոյ Պ. Համբարձում Ենֆիաճեանց Տնօրէնութեամբն և Ուսումնական Պ. Մարկոս Աղաբէկեանի խմբագրութեամբը։ Այս Ամսագիրը Պոլսոյ մէջ, մինչև ցարդ Մեծ նոր խանը Ընթերցասիրաց Թանգարանէն կը ցրուէր, տարեկան գինը 8 Բարպօվանց ըլլալով։ Իսկ արդ կը ծանուցանեմ։ Յարգոյ Հասարակութեան թէ՝ այսուհետ, այսինքն 1861 Յունուարի թիւէն սկսեալ գինը 5 Բարպօվանցի ինչնալով, Հասրըճիներուս մէջ Նոր խանին վարի յարկը թիւ 10։ Մեծարգոյ Ենֆիէճեանց Խաչատուր աղայի Աղաղայենպիտի ցրուի։ և մինչև հիմա Յունուար ու Փետրուարի թիւերը եկած ըլլալով՝ ուզողը կրնայ նոյն տեղէն ստանալ, և բաժանորդ ստորագրուիլ։

Եւ արդ յիշեալ Ամսագրին այս տարուան Յունուարի թուոյն մէջ Աղգանպատ և ադուլոյդուած մը տեսնուեցաւ Արժանայարգ Խրիմեան Աղգասէր Մկրտիչ Վարդապետի շարագրութեամբ։ ուստի այս անգամ սոյն յոդուածը ամբողջ քաղելով, և բաւական երկար ըլլալուն երկու անգամով օրագրոյս միջոցաւ կը հրատարակեմք, և ինչպէս ըսինք անոր մէջ եղած Աղգանպատ կէտերուն ուշամտութեամբ դիտողութիւններ ընելը մեր բարեսէր ընթերցողաց խոհականութեանը յանձնելով։

ՁԱՅՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՒՈՅՆ

Ներկայ դարուս յառաջընթաց չրջանին մէջը Հայաստանեայց գրականութեան երկնուց կամարը փոքը ինչ պայծառութեան աղօտալոյս նշմարանք կը չողչողի։ հայկայ լուսակարօտ որդիքները իբրու թէ տգիտութեան քնէն նոր արթնցած սկսեր են այս մթնալուսին տակ փոքր ինչ ուսման խաղերով զբաղիլ։

Հայկազանց այժմեան գրականութեան կամարին ծիր զանազան աստղեր ծագեր են. որը պայծառ, որը աղօտալոյս, որը մեծ եւ որը փոքր. բոլորն էլ իրենց չրջանին մէջը չարժում ունին եւ կընթանան դանդաղ կամ թեթեւաչարժ իւրաքանչիւր առանձին

ճանապարհով. ո՞ւր, դէպ 'ի միմիայն նպատակ Մասիս կամ 'ի Հայաստան։ Այս փոքր եւ մեծ աստեղունք 'ի միասին գրեթէ Յիսուսի ծննդեան օրը երեւցած Յակովբայ աստղի նմանութիւն ունին, եւ նոր աւետիս տալով կառաջնորդեն Հայկայ սերունդներուն դէպ 'ի նորածին լուսաւորութեան մանուկը. որ պառաւցած մօր Հայաստանի հազարամեայ ամուլ արգանդէն ցաւերով ու վշտերով հազիւ հազ ծնաւ։ Այս նորածին մանկան մարմնոյն կազմուածքը խիստ սիրուն, զուարթ եւ կայտառ կը թուի չատերու աչքին. բայց թէ պիտի ապրի՞ երկար կամ աճելով պիտի զարգանա՞յ սոյն վերջին տկար ծնունդ հակայական հասակով, ինչպէս չորրորդ դարու այն անդրանիկ սքանչելի ծնունդ հայկատառ գրականութեան. թո՛ղ վճիռ տան Հայ բանասէրները. նախատեսութեան աչք չունող մարդիկներէն ո՞վ կը համարձակի երաշխաւոր լինելու. միայն թէ նախագէտ Աստուած. թէ եւ փոքր 'ի չատէ մարդն եւս իւր կարճատես աչքով ներկայէն ապառնին կարէ գուշակել երբեմն։

Գիտէ՞ք, պատուելի խմբագիրք, արդի ժամանակ բաւական թուով գրասէր հեղինակներ ծնած են մեր մայրենի լեզուի ծոցէն. բայց թէ այս վերջի գրասէր ծնունդները մաքով, հոգւով, սրտով եւ արուեստով հարազատ նմանութիւն ունի՞ն Մեսրոպեան դարուն մէջ երեւցած անդրանիկ ու ոսկեդրիչ Մատենագիրներուն. կամ թէ վերջիններուն աշխատութեան արդասիքը կը հաւասարի՞ առաջիններուն հոգեկան չահաւէտութեամբ. թող կուտանք այս դասասատանը բանասէր քննիչներուն ճշմարտայոյզ մըտաց։

Սակայն մեծ գովութեան ու ծանրակշիռ վարձուց պսակներու արժանի են այժմեան դարու ազգային գրասիրաց արդիւնքը. որոնք արդարեւ Հայոց-նսեմացած գպրութեան կամարը կը զարդարեն հետ դեռեւ պէս պէս լուսաբեր աստղերով։ Աւելի սիրուն ու գեղեցիկ կը սեմնուին այն աստեղաց նոր եռեւոյթները, որ շաբաթէ շաբաթ կամ ամսէ ամիս կը ծագին հայրենասիրական ճառանչներով ու կառաջնորդեն դէպ 'ի հնոյն Հայաստանի հեռաւոր աշխարհը. միայն թէ այս աստղերու ուղեցոյց ընթացքը զանազան շաւիղներ ունի։ Բացայայտ խօսինք, աստեղայոյս խմբագիրներէն ոմանք կը պնդեն եւ կը հաստատեն թէ պէտք է արեւմտեան Եւրոպիոյ լուսաւորեալ քաղաքականութեան ճանապարհով ընթանանք, որպէս զի մեր հին հայրենիքը շուտ հասնինք. ոմանք եւս ընդհակառակ կը պնդեն թէ ի՞նչ պէտք է մեզ Արեւմտեան օտար ճանապարհով, ու մեծամեծ աշխատանքով դէպ 'ի Հայաստանը երթալ. աւելի լաւ է մեր ընկիկ սեփհական կարճ ու դիւրին ճանապարհով երթանք, եւ առանց հայրենասահման գլխէն դուրս ելնելու՝ կորուսեալ հայրենիքը դարձեալ հայրենեաց մէջը գտնելու ջանալ։ Այս երկու հակառակ ուղեցոյցներն ալ իրենց նպատակին նայելով կերեւի որ բարի է դիտաւորութիւնն։

Լաւ մտածէ', ուշիմ ընթերցող, սոյն երկատեսակ ճանապարհ երթալու համար սիրտ, խելք եւ արիականութիւն պէտք է. վասն զի իւրաքանչիւր ճանապարհ մեծամեծ վտանգներ ունին. երկու կողմ յաջ ու յահեակ խորագոյն անտառներու մէջ դարանամուտ կեցած կապասեն զանազան գիշերաշրջիկ գաղտագողի գազանները. Հայկայ պարզամիտ զաւակներ որոալու լեզուի խորամանկութեան ժանիքներ սրելով կը դիտեն հեռուանց, որպէս զի յարձակին ու յափշտակեն խեղճ, աղքատ եւ տառապեալ ժողովուրդ Հայոց։ Մեծ զգուշութիւն, մեծ արիականութիւն եւ մեծ պատրաստութիւն պէտք է նոցա պատառիչ ժանիքներէն ապահովութեամբ անցնելու համար։ Հայ սրտեր այնչափ երկիւղով պաշարեալ թուլցած են բազմաժամանակեայ ստրկութեան, ծառայութեան եւ բազմադիմի թշուառութեան մէջը, մինչեւ ըստ Սողոմոնեան առածին՝ դեռ ճանապարհ չելած իբրեւ վատասիրտ կաղաղակեն թէ «Առիւծ գոյ 'ի ճանապարհին»։ Ո՞ւր են այժմ, ո՜հ, Հայոց անմման քաջերը, որք երբեմն աղատասարերուն վերայ սիգաճեմելով առիւծներ եւ արջերը նոցա ոտքի տրոփիւն միայն լսելով որջերու մէջը կը փախչէին։ Թո՛ղ դայ մեր քաղցրախօս Եղիշէն եւ այս տեղը իւր արտասուալից ողբերը կրկնէ. «Սպառեցան բարակ քրտականք եւ խցեալ կուրացան արշաւանք որսորդաց»։

Ուստի Հայոց յառաջադիմութեան քայլ տարակուսած անշարժ կեցած է իր տեղը. հազարամեայ մեռեալ ծերունւոյ ոսկորները դեռ յուսահատական ողբով կը թուլացընեն այս բանակին սիրտ ու ոգին. «Խորհրդական չէ 'ի միջի, որ յարդարէ... Հայկաղանց անոգորմալար բանակը։ Դու, Կո՛ւնք Հայոց աշխարհին. արօրաձեւ երամովդ այս տխուր բանակին վրայ ման կուգաս, քո դրաւոր հանդէսներուդ մէջ աւաղական ձայնիկդ ածելով՝ քնացած հոգիներու նոր արթնութիւն կուտաս, փոխոխ եղանակովդ երբեմն քաջին Վարդանայ հոգեվառ ճառերով կը սրտամղես աշխարհական զինուորներու լքեալ սիրտերը, երբեմն եւս հայրենի եկեղեցեաց ու բազմաթիւ վանօրէից սահմանները շուրջ գալով, ձայնիկդ դէպ 'ի կղերաց խումբ կը դարձուցանես. Քրիստոսի զինուորնե՛ր, ելէ՛ք, առէ՛ք ձեր զէնքը, խաչ ու Աւետարանը. Հայոց յառաջադիմութեան բանակ դաշտին մէջ անտէր, անօգնական կեցած ձեզ կ'սպասէ, Յովսեփայ, Սահակայ եւ Ղեւոնդի պէս գիտութեան, լուսաւորութեան եւ մեր հայրենի Եկեղեցւոյ պաշտպանութեան դրոշակ 'ի ձեռս առեալ անցէ՛ք յառաջ։

Ահաւասիկ պատրաստ է բանակն ձեր եռեւէն գալու. նուիրական ձեր խաչին սուրով փչրեցէ՛ք, խորտակեցէ՛ք գայլերուն ժանիքները, եւ ձեզ յանձնուած հօտին առաջնորդ լինելով հասուցէ՛ք մինչեւ մեր այն վաղեմի Գրիգորաչէն ցանկապատ դաշտը։

Այսպէս, երբ որ Հայոց աշխարհի դատարկ օդերու մէջ բարձրաքարոզ աղաղակներդ կը ցնդին, ու կանչելով կանչելով կը նուազի ձայնիկդ. պահ մի տխրութեամբ բունիդ մէջ քաշուած կը լռե՛ս ապա ուրիշներ կսկսին։

Մինչեւ ե՞րբ Հայոց բանակը տգիտութեան ամայի դաշտին մէջը սպասէ. մինչեւ ե՞րբ նոցա յառաջադիմութեան քայլը ոտնակոխ բեւեռած մնայ իր տեղը. մինչեւ ե՞րբ նոցա աչք ձեր դալստեան նայելով հալի ու մաշի. դո՛ւք, ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ անուանեալ կղե՛րք, մինչեւ ե՞րբ իբրեւ լուսեղէն սիւն մի ձեւանալով չլինիք առաջնորդ ու չերթաք բանակին յառաջ. մինչեւ ե՞րբ չորրորդ դարու զիտութեան լուսափայլ դրօշակը ծուլութեան, անհոգութեան վարշամակի մէջ ծալելով չը բարձրացընէք իբրեւ քաջ դրօշակիր զինուոր մի յառաջ խիզախելով։

Մեր յոյս ու համբերութիւն հատաւ, ձեր օգնականութեան ձեռքը մեղի պէտք չէ լաւ գիտցանք ու հասկացանք, որ դուք Աստուծոյ տապանակ կրող քահանայից պէս ժողովրդեան յառաջ չէք երթար։

Սկէ՛ք ուրեմն, Հայոց չուարած բանա՛կ, ընտրեա՛նք մեր միջէն ուսումնական անձինքները. թո՛ղ լոկ աշխարհականք լինին, մնաս չունի, գրաւոր հանդէսներու նոր ատեան մի բանա՛մք, խորհուրդ առնենք։ ու համաձայնութեամբ վերջին վճիռը հաստատելով գրե՛նք, կնքենք, հրատարակե՛նք եւ քարոզե՛նք բոլոր Հայկազանց տանիքներու վերայ. մերժե՛նք միանգամայն բոլոր կղերաց դասը, պարսաւանք, բամբասանք, նախատինք կարկուտի պէս թափենք նոցա գլխուն. այս եղանակ խայտառակութեան մրով դրոշմե՛նք ամէնու ճակատը որպէս զի աշխարհի առաջ ամէնան, մեր այսչափ արհամարհանաց սուր խթանէն զգան եւ սթափին անհոգութեան արբեցութենէն։ Իսկ եթէ մեր այսքան կշտամբանաց քարերուն դէմ դնելով տակաւին իւրեանց հեղգութեամբ մէկ անկիւնը քաշուած, Յովնանի պէս պառկած խորդան. այնուհետեւ առանց խղճի եւ արդար իրաւամբ այն հայրենատուր նուիրական սուրը աւանդ-վերադր եւ փիլոն, որ նոցա ամօթանաց միակ պատգարան ու ծածկոյն է, քաշե՛նք, հանե՛նք վրաներէն։

Մնացեալը գալ անգամ։

ԽՕՐՈՂ ՕՂԼՈՒ
ԵՒ
ԿԱԹՆԱՎԱՇՈՒ ՌՈՒԶԱՆԴ

Ստենոք Խօրոզ օղլու կ'ըսեն մէկը կայ եղեր, և շատ բանիրուն և գործունեայ մարդ մըն է եղեր։ Սիկայ օր մը Աստուծոյ մը քով երթալով «Տէր, կըսէ, անկեղծաբար կը փափաքիմ ձեզի ծառայութիւն մի ընել առանց վարձու»։

Սիրով կընդունի Աստուծոյն այս մարդուն առաջարկութիւնը, և կը հարցընէ թէ՝ ի՞նչ կերպ բան կրնայ ընել։ Անմիջապէս պատասխանելով «Տէր իմ, կ'ըսէ, տանդ վարի յարկը սենեակ մը ունիս, որ ամեն օր բազում մարդիկ կ'երթան կուգան, ճամբու անցագիր ընդունելու համար։ եթէ կը բարեհաճիք՝ այն սենեակին անօրէնութիւնը ինձի յանձնէք, որով այն տեղէն ելլելիք շահու միջոցները լաւ մը կարգադրեմ։ և այնպէս ձեր տանը եկամուտները շատցընեմ»։ Աստուծոյն մարդուն այս՝ իւր տանը նպաստաւոր խօսքերուն ունկնդիր ըլլալով նոյն վայրկեանը կը յանձնէ անոր իւր խնդրած պաշտօնը սա պայմանաւ թէ՝ — ինչ որ ընէ, նայի որ արդարութիւնն ու գթութիւնը ձեռքէ չի թողու, ևս առաւել ըստ նոր կարգադրութեան՝ նոյն սենեակին յատկացած կանոնները իսկ և իսկ հպատակի —։ Աստոր վրայ այս անձնանուէր Խօրոզ օղլուն յիշեալ Աստուծոյն շատ մը շնորհակալութիւններ ըրած՝ կ'ինչնայ վար և կ'սկըսի իւր պաշտօնը վարել։ Բաւական ժամանակ իւր այս անձնանուէր ծառայութիւնը իր խոստմանը համեմատ ամեն կերպիւ հաւատարմաբար կատարելով, օր մը կաթնավաճառ Ռուզանդ անունով մէկը իւր ամուսինը Արկարա խրկելու համար կուգայ այս մարդէն անցագիր մը կը խնդրէ, ըստ օրինի հարկ եղած փոխարէնը սիրով հատուցանելու պայմանաւ։

Իսկայ հոս Խօրոզ օղլուն և յիշեալ Ռուզանդին մէջ տեղը այս բանիս վրայօք դարձած խօսքերը համառօտիւ 'ի մէջ բերեմք, և «Ռուզանդը սա ըսաւ, Խօրոզ օղլուն նա պատասխանեց» ըսելով ընթերցողին չի ձանձրացընելու համար, անոնց անուններուն միայն Խ. Ռ. սկզբնատառերը դնելով բաժնին որոշելք։

Երբ Խօրոզ օղլուն շատ մը — հիմայ չըլլար, գործ ունիմ, սահաթէ մը, իրիկուան դէմ, վաղը եկու, դեռ կանուխ է, քիչ մը բան ու-

տեմ եռքը, ի՞նչ կըլլասկոր դէ բէրէ, էյ ալ շատ կը խօսիս կոր . . . . — պ-ուրապ խոսքերէ յեռոյ (կըսէ)

Խ. «Բեր ծ՝ նայիմ ի՞նչ է եղեր ատ»։

Բ. (յետին խոնարհութեամբ մը) — Աղա ամուսինս Մարկարա գիւղը պ'ուզի խրկեմ, եթէ կարելի է կ'աղաչեմ ինձ անցագիր մը շնորհէք —։

Խ. «Աղէկ ծ՝, բայց պէտք է որ անցագիրը չառած 80 դահեկան հատուցանէք»։

Բ. (շիտիթելով մը) — Ողորմեցէք իմ չքաւորութեանս, ճանըմ աղա. ես այնքան ստա՝ չեմ կրնար տալ, հէմ կարծեմ աղա՝ ատոր փոխարէնը 35 կամ 40 ղուռուշ է. ինչպէս որ մեր թաղին Միխտարը վկայագիր մը տուած ատեն ատանկ ըլլալը իմացուցեր էր —։

Խ. (նեղանալով մը) «Օ՝, հէմ շատ կը խօսիս կոր հէմ սերթ. ես միխտար, միքտար չեմ հարցուներ կոր քեզի, կ'ուզես 80ը տուր, կ'ուզես միտար, ահա անցագիրդ հոս է, (դրասեղանին մէջ դնելով) ասոր փոխարէնը այս Տանտիրոջ կողմէն այսպէս «ուշ-ուշ» է, ուրե՞ն տուր ստակը առ անցագիրդ, չէ՞ նէ դուրս ել սըկէ, զի ես դեռ ուրիշ գործեր ունիմ տեսնելիք»։

Բ. (Աղերսելով մը). Հապա աղա, ճամբորդս . . . .

Խ. Ծ՝ ան ալ ե՞ս պիտի մտածեմ. «էյ-էյ-էյ ինչեն ։ պ-ուրապ-ը- չալար. կ'ըսէ ու ոտք կ'ելլէ»։

Էյն ատեն Բուզանդին ճարը հատած, կը հանէ վրան գտնուած ընդամենը 70 դահեկանը անոր դրասեղանին վրայ կը դնէ, և անցագիրը կը խնդրէ։

Խ. Ի՞նչ է այս, կըսէ. (հարկաւ 'ի ներքուստ մարդուն տխմարութեանը վրայ ծիծաղելով), և քանի՞ դահեկան է տուածդ։

Բ. (Դողդըղալով մը) Ներեցէք աղա, 70 դահեկան է. քանզի վրաս այսքան գտնուեցաւ։

Խ. (Ցօռալով մը) Ձէ՝, չըլլար անանկ բան. պէտք է որ 10 դահեկան ևս հատուցանես։

Բ. Հաւատացէք աղա ուրիշ ստակ չունիմ վրաս, նաեւս քալելով պիտի երթամ տունս։

Խ. Մէկ ուրիշ բարեկամդ փոխ առ։

Բ. Յամանակը ուշ է, ես հոս անծանօթ, հիմայ ո՞վ կրնամ գտնել։ Բայց առէք այժմ այս 70 դահեկանը, և տուէք իմ անցագիրս, որ վաղը առաւօտ ամուսինս ճամբայ դնելէն յետոյ, անպատճառ. կուգամ և մնացեալ 10 դահեկանն ալ կը հատուցանեմ . . . . Ուրեմն կ'աղաչեմ 'ի սէրն Աստուծոյ ընծաներուս հաւատալով շնորհեցէք անցագիրը։

Խ. Ես անանկ պարապ խօսքերու չեմ կրնար շուտ մը հաւատք ընծայել. կ'ուզես նէ՝ ստակդ հոս առանդ կը դնես, ու վաղուան օրը 10 դահեկանն ալ կը բերես այն ատեն գործդ կը լմննայ։

Բ. Վաղուան օրը քանիին կրնաք գտնուիլ հոս աղա։

Խ. Հինգին, վեցին ատենները . . .։

Բ. Ի՞նչ կ'ըսէք ճանըմ աղա, ատանկ բան կ'ըլլայ մի եա, մինչև այն ատեն շոգենաւը ելած կ'ըլլայ։

Խ. Դու ալ ի՞նչ կ'ըսես, ան իմ հոգս է։

Բ. Ճամբորդս իւր ճամբէն կ'արգիլուի։

Խ. Ը՛հ երկար ըրիր, թող եկող շոգենաւով երթայ։

Բ. Խնայէ իմ աղքատութեանս, զի ես նոր շաբաթ մը եւ մնալովը ինծի վնաս կը հասնի։

Խ. «Իրաւ դու շատախօս մարդ մը և խօսք չի հասկցող մէկ մը նես եղեր, ալ քեզ մտիկ ընելու ատեն չունիմ» կըսէ ու խեղճը հոն տրտմեալ ձգելով շտապաւ կ'ելլէ կ'երթայ։

Ուստի Բուզանդն ալ բարկանալով մը ստակն ալ անցագիրն ալ հոն ձգելով ուշ ատեն իր բնակարանը կը դառնայ։

Վերջապէս չերկնցնեմք խօսքերնիս՝ միւս օրը նորէն գալով և այն 10 դահեկանն ալ հատուցած անանկով անցագիրը կ'ընդունի, և այն Տանտէրոջ աղէկ ապէկ օրհնեանքներ տալով կը հեռանայ անկէ, վասն զի այս մէկ անցագիրը իրեն 100 դահեկանը անցած կ'երևի։ Եւ այնպիսի մարդ մըն է եղեր այս Բուզանդ կոչածնիս ոչ՝ հաղիւ թէ այս գումարը երկու շաբթուան մէջ կրնայ վաստակի եղեր։ Եւ դու երևակայէ՞ ընթերցող թէ այս բանը անոր ինչ աստիճանի վնաս պատճառած է։ Այսինքն հետաքրքիր ընթերցողներուս կողմէն ասոր բացատրութիւնը պիտի ուզուի՞ մի . . .։

ԾԸՆՈՒՅՑԻՄ ՐՈՒԶԱՆԱՄԻՆ ՄԷՃՄՈՒԱՅԸ ՀԱՎԱՍԻՍ

Մէճմուայը Հավատիս Հարաթական լրագիրն իւր 392 թուովը Յայտարարութիւն մը հրատարակելով որուն մէջ Հայ հասարակութեան՝ առաւելապէս առևտրական մասին նը պատեղու ծանուցում մը ըրած էր. այսինքն ներկայ տարւոյս Ապրիլ 4 թուականէն սկսեալ հանապազօրեայ անցից և դիպուածոց լուրերը համառօտաբար առանձին թերթերով հասարակութեան հաղորդել։

Ահա այս առաջին անգամն է որ Հայ խըմբագրութիւնը այս կերպ բանի մը ձեռնամուխ եղած է. և կարծեմ մենք չըսած Հայ հասարակութիւնը (առաւել անոնք, որոնք որ օտար լեզուներ չեն գիտեր), կրնայ ինքնիրեն երևակայել այս հրատարակութեան ամենաօգտակար բան մը ըլլալը. քանզի մինչդեռ Տաճկաստանի հեռագրական թելերը իւրեանց ամենաղարմանալի արագութեամբը աշխարհի չորս կողմէն ամեն առտու և իրիկուն կերպ կերպ կարևոր լուրեր կը հաղորդեն մայրաքաղաքս, և այն լուրերուն գլխաւոր կէտերը գրեթէ բոլոր օտար լեզուաւ լրագիրները իրենց աղդակցացը նոյն հետայն իւրեանց օրական թերթերովը կը հաղորդեն, ասդիէն Հայ հասարակութիւնը անոնց հետ մէկտեղ այն լուրերը ժամանակին ընդունելու բարեբաղդութենէն զուրկ մնացեր, և քիչէն քիչ շաբաթէ մը ետքը այն լուրերուն տեղեկանալու ստիպուեր էին. Եւ յիրաւի ժամանակիս պարագաներուն նայելով այս բանս երբեմն մեծամեծ նեղութիւններ և վնասներ անգամ կը պատճառէր Հայ ժողովրդեան, նամանաւանդ առևտրական գործոց զբաղեալ անձանց.

Եւ արդ այս բանիս մասամբ մը օգտելու նպատակաւ է որ՝ ահաւասիկ վերոյիշեալ լրագրոյն Մեծայարդ Խմբագիրը այժմիկ Երեքշաբթի Հինգշաբթի օրերը միայն մէյմէկ օրական թերթեր պիտի հրատարակէ, որուն մէջ համառօտաբար պիտի պարունակուին (ըստ խոստման Խմբագրին) հեռագրական լուրեր, խիստ հարկաւոր յայտարարութիւններ, երբեմն զուարճալիք, շոգենաւուց երթևեկութիւնը, արմտեաց գինը, գամպիս, և ստակի գին, երեք կարգ ըլլալով, այսինքն առտու, ցորեկ և իրիկուան գիները.

Նաև կը խոստանայ յիշեալ Մեծարու Խըմբագիրը որ՝ եթէ այս գործը յաջողութիւն գըտնէ, այսինքն, բաժանորդները շատնան, շաբաթը հինգ անգամ, որ ըսել է ամեն օր, բայց 'ի կիրակիէ պիտի հրատարակուին այս թերթերէն.

Ահա այս խոստմանց համեմատ Ապրիլ 4 Երեքշաբթի օրը առաջին և Շաբաթ օր երկրորդ թիւերը 'ի լոյս ելաւ. Բ-ԴՈՒ Մեծաւոյ Հ-ՎԱՆ վերնագրով.

Յիրաւի դիրքը փոքրիկ, բայց մէջը պարունակուածը ներկային օգտակար և ապագային շահաւոր կրնայ ըլլալ Հայ հասարակութեանս.

Երանի՜ է թէ այս կերպ օրականներուն թիւը օր օրի Ազգին մէջ աւելնար, և անոնց մով Հայ ժողովուրդը բաղդատմունիւթական վնասներէ զերծ մնար.

Այս մասին ասկէ աւելի խօսք ընելը մեր օրագրական սահմանէն դուրս ըլլալով, այսքանն ալ իբրև ծանուցում մը կը հաղորդեմք մեր ընթերցողաց, միանգամայն յորդորելով զիրենք՝ որ ըստ պայմանի ապրիլ 4 է սկսեալ մինչև 15 օր իրենց յօժարակամ ընդունելութիւնը յայտնեն նորին Մեծարգոյ Խմբագրին, որպէս զի ամենայն կերպիւ քաջալերուի այս ձեռնամուխ եղած դժուար գործը յաջողցնելու.

Արդ յիշեալ Բ-ԴՈՒ այժմիկ շաբաթը երկու անգամ, այսինքն Երեքշաբթի և Հինգշաբթի օրերը պիտի ցրուի. Գինը Պոլսոյ մէջ Մէճմուայը Հավատիսի բաժանորդ եղողներուն համար տարեկանը 50, վեց ամսուանը 30 դահեկան. բաժանորդ չեղողներուն համար տարեկանը 60 և վեց ամսուանը 35 դահեկան է.

Եւ դուրսերու համար (բօստաի ծախքը Խմբագրին վրայ) նոյնպէս Մէճմուայի բաժանորդ եղողներու համար 60, վեց ամսուանը 35. բաժանորդ չեղողներու համար 70 և վեց ամսուանը 40 դահեկան.

— Այս միջոցիս Երուսաղէմի Միաբան վարդապետներուն կողմէն շարադրուած, և Ս. Յակոբեայ Ս. անքին տպարանէն 'ի լոյս ելած « Հելքումն անիրաւ զրպարտութեանց և Աղերս առ Ընդհանուր բարեխորհուրդ Ազգային ժողովն » վերնագրով 10 երեսէ բաղկացեալ Տետրակ մը հրատարակուեցաւ 'ի Պոլիս. Ինչպէս կ'երևի վերնագրէն յիշեալ Տետրակը Սահմանադրապէս կազմեալ Ազգային ընդհանուր վարչութեան ուղղուած աղերս մը կամ բողոք մըն է, ընդդէմ Մեղուի և Մինասեանի այն բարբանջմանց, որն որ անցեալները Երուսաղէմի անմեղ և Արժանայարգ Միաբանութեան, (որ լաւ ևս է ըսել Ս. Աթոռին) վրայօք անիրաւաբար 'ի գործ դրած էին իրենց օրագիրներնուն միջոցաւ.

Արդ բարեմիտ Ազգայինք 'ի սէր Ս. Աթոռին թող խորին մտածութեամբ մը ընթեռնուն յիշեալ Տետրակը, մենք ալ յառաջիկայ թերթերնուս մէջ անոր վրայօք մեր կողմէն ըստ հարկի քանի մը խօսք ընելը պարտ յանձինս կը համարիմք.



Հայոց Ազգը դժբաղդաբար ժամանակէ մը 'ի վեր ըստ բաւականի երեւելի անհատներու կորուստներ ընելով, նոյնպէս վրայօք զգացած սաստիկ կսկիծները չի մոռցած, ահա այս օրերս ամենասաստիկ ցաւ մը եւս ունեցաւ, իր մէջէն մէկ հատիկ եւ ամենասիրելի անհատ մը անակնկալի վայրկեանի մէջ կորսնցնելով։

Այս կորսուած եւ Ազգին լրութեանը մեծ ցաւ պատճառող անզոյգ անհատն է՝ Մեծահամբաւ եւ աշխարհաւոր ձեղայիրեան Վանեցի Մկրտիչ Ամիրան։ որ լսածնուս ատենէ մը 'ի վեր չնչարգելութեան անբժշկելի ախտին հանդիպելով վերջապէս ամսոյս (Ապրիլ) 4-ին շաբաթ առաւօտ Աշխարհէն ժամանակ իւր մահկանացու եւ ժամանակաւոր կենաց շրջանը լրացուց 'ի հասակի 55 ամաց, հաղանդելով 'ի սկզբանէ աշխարհի մարդկային ցեղին համար սահմանուած Ամենակալին վճռոյն, եւ խոնարհեցաւ իր ճակատագրին, որ աշխարհ եկած վայրկեանէն անեղծանելի կերպիւ գրուած էր 'ի Ցերկնից։

Ուստի հետեւեալ օրը (որ է կիրակի) Ցուղարկաւորութիւնը կատարեցաւ մեծահանդէս շքով մը 'ի Գասը եւ 'ի Թաղիւղ, որուն ներկայ էին արդի եւ Նախկին Ամենապատիւ Արքեպիսկոպոսներն, քանի մը Գերապատիւ Եպիսկոպոսունք, բազմաթիւ Ցարգելի Վարդապետք եւ Քահանայք, Սարկաւագունք եւ քաղդրաձայն Դպիրք։

Դարձեալ ներկայ էին ամեն Ազգերէ եւ ամեն աստիճանէ բազկացեալ խուռներամ բազմութիւն մը, որոնք եկած էին այս Մեծանուն Անձին մարմնոյն վերջին հրաժարական մը տալու, որոնք նորին կոզմանէ տեսած բարերութեանցը փոխարէն վերջնական երախտիք մը յայտնելու . . . ։

Վերջապէս այս կերպով տարին զինքը իւր նախնեաց շիրիմներուն քով թաղեցին . . . ։

Ցիրուցի մեռաւ ձեղայիրեան Մկրտիչ Ամիրան մարմնով. սակայն յարատեւ՞ այս անցաւոր աշխարհէս հոգւով. թաղուեցաւ իւր դամբարանը անդոյզ մարմնով, դնա՞ց, հանգչեցա՞ւ երջանկութեան Ցաճարը զգալի հոգւով. ծածկուեցաւ անոր փտուել մարմինը երկրային անիծեալ հողերուն տակը, փայլեցա՞ւ կենդանի հոգին Երկնային երանեալ առաքինութեանց դասը։ Վերջապէս անոր անզգայ մարմինը երկրի վրայ « Հող էիր եւ 'ի հող դարձցիս » անէծքին ենթակայ եղած ատեն՝ Երկինքը զգալի հոգին այն Ցերոյ « Ազնիւ ծառայ՝ բարի եւ հաւատարիմ. . . մուտ յուրախութիւն Տեառն քո » ձայնը լսելու հրաւիրուեցաւ . . . ։ Բայց ի՞նչ կ'ըսեմք մենք, միթէ մեռա՞ւ Մկրտիչ Ամիրան, արդեօք մարմնով երկրի տակ անցայա եղած, եւ հոգւով Երկինքը եղած ըլլալով՝ բոլորովին անհետացա՞ւ աշխարհի վրայէն . . . ո՛չ երբէք. ո՛չ մեռաւ եւ ո՛չ անհետացաւ, այլ մեռեալը անոր լոկ հոգայէն, անշունչ, անզգայ ու փտուած մարմինն էր որ մեռաւ, ու առժամանակեայ կերպիւ ոչնչացաւ, նոյնպէս ազնիւ հոգին էր որ Երկինքը անմարմին էակներու հետ միացաւ 'ի մեզ անտեսանելի. իսկ ձեղայիրեան Մկրտիչ Ամիրան աշխարհի վրայ կենդանի է անուամբ, անմահ է իւր հռչակաւոր գործերով . . . ։

Բայց ո՞վ կարէ պատմել երկրի վրայ այս հաղուագիւտ Անձին իւր կենդանութեան ատեն ըրած բազմաթիւ մեծագործութիւնները, անհամեմատ առատաձեռնութիւնները, նախանձելի առաքինութիւնները, ցրցուցած մարդասիրութիւնները, Տէրութեան ըրած ծառայութիւնները, Ազգասիրաստ աշխատութիւնները, Ազգուն Եկեղեցեաց, Դպրոցաց, Հիւանդանոցի, եւ Աղքատանոցի համար չնորհած նուէրները. եւ առանց Արծի ու Ազգի խորութեան գործած բարերարութիւնները . . . ։ Վերջապէս բազում թշուառ ընտանեաց բարեկեցութեանը համար ցրցուցած խնամքները եւայլն, եւայլն։

Այս՝ ո՞ր գրիչ կրնայ եւ կարող է նկարագրել այս անզոյգ Անհատին գործերը մի առ մի յիշատակելու։ Ո՞ր հեղինակներ արդեօք պիտի կարենան անոր ամեն մէկ ըրածները բովանդակելով ճշդապէս նորին կենսագրութիւնն ընելու։

Ճշմարտապէս խօսելով՝ մեր անզոր գրիչը եւ մեր տկար յիշողութիւնը կարող չէ անոր հարիւրին մէկ ըրած գործերը յիշել եւ նկարագրել հոս։

Արդ տրեմն ազգ՝ ելէ՛ք ո՛ Ազգիս երեւելի Մատենագիրներ, ելէք կ'ըսեմ, դի դուք որ երկրի վրայ մեծագործ անձանց կենսագրութիւնները յօրինել կ'ուզէք, ահա ձեզի Հայ սերունդէն իրաւունք մեծագործ Անձ մը, որ իրաւամբ արժանի է կենսագրութեան։ Բայց պիտի . . . ։

Ելէ՛ք եւ դուք ո՛ ուսումնասէրք եւ երկասէր Գրագէտներ, դուք ալ որ կը փափաքիք աշխարհի առաքինի մարդկանց վրայ տանելիան ճառեր, բանաստեղծական Ցաղաշափութիւններ չարադրել, ահա եւ ձեզի Արմենեան Ազգէն բարերար եւ առաքինազարդ Անհատ մը, ուստի առէք ձեռնընդ ձեր քաջ եւ ազգու գրիչները, եւ այնպէս այս Հայ առաքինոյն վրայօք ներբողական ճանիկ խօսեցէք, ճառեցէք, եւ քաղցրանուագ ու արտասուէ երգերով մխիթարեցէք թէ այս առաքինի Անձին տարաժամ մահուանքը սրտախոցեալ ընդհանուր Ազգը, եւ թէ անոր զրկ մնացած, եւ 'ի խոր տրտմութեան մէջ թաղուած Աշխատասէր ընտանիքը . . . ։